ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ նաև՝ **ԶԼՄ**) հրապարակումների հիման վրա փաստաբան Ռուբեն Սահակյանի (արտոնագիր թիվ 13) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>ԶԼՄ-ների հրապարակումների համառոտ բովանդակությունը.</u>**

14.11.2019թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը ներկայացրել է զեկուցագիր, որի համաձայն՝ 07.11.2019 թվականին www.youtube.com կայքում հրապարակվել է տեսանյութ[1], որտեղ փաստաբան Ռուբեն Սահակյանը ճեպազրույցի ընթացքում խոսելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի մասին, արտաբերել է հետևյալ միտքը. *«Նա չի փիրապեփում իր մասնագիփությանը: Նախորդ նիսփում չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում և ասաց՝ «կարճ կապեք»... եթե չես հասկանում, ինչո՞ւ կարճ կապեմ, գնա ձեր փուն, կապուներին դապապարփի: Քո կապուների գործը լսի, ոչ թե մարդկանց ... դե, նա շապ կապուներ է պահում»:*

Միաժամանակ, զեկուցագրում նշվել է, որ նույն օրը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը www. 1in.am և www.4rd.am կայքերի լրագրողներից կողմից ստացվել է բանավոր հարցում, թե արդյոք Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը չի պատրաստվում կարգապահական վարույթ հարուցել դատավոր Աննա Դանիբեկյանին ուղղված փաստաբանի հրապարակային արտահայտությունների հիմքով: Նշված կայքերը իրենց հրապարակումներով անդրադարձել են դատավորի հասցեին ուղղված վերը նշված խոսքին[2]:

---

[1] https://www.youtube.com/watch?v=v5LiHmSWcyA&t=130s

[2] https://www.1in.am/2653818.html , http://4rd.am/news/harcy_chi_qnnarkvel_patabanneri_palat/2019-11-07-601?fbclid=IwAR1q_dGFEimeDHG1DSZCZYICsap50m1BJ-yG99yE5AFwj2ymoz4goG6kJzw

21 նոյեմբերի 2019թ.
թիվ 480-**Ա**/**ԿԳ**-19239

2. **<u>Պալատի եզրահանգումը և որոշումը.</u>**

Գտնում եմ, որ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Ռուբեն Սահակյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:***

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.[1] հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***<u>փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝</u>*** *պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները), ինչպես նաև* ***զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:***

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

ՁԼՄ-ների հրապարակումների ուսումնասիրության արդյունքում Պալատը գալիս է այն եզրահանգման, որ դրանում տեղ գտած որոշակի փաստերի հաստատման դեպքում փաստաբան Ռուբեն Սահակյանի արարքում կարող է առերևույթ առկա լինել Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներ:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ ***Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:***

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ ***փաստաբանը հատուկ դեր է ստանձնում*** և նրա պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանը՝ որպես արդարադատության շահերին ծառայելու կոչումը կրող անձ, պարտավոր է իր գործողություններով նպաստել փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքի ձևավորմանը:

Տվյալ դեպքում, ՁԼՄ-ների հրապարակումների ուսումնասիրությունից

առերևույթ հետևում է, որ Ռուբեն Սահակյանը լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում խոսելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի մասին, արտաբերել է հետևյալ միտքը. *«Նա չի փիրապետում իր մասնագիտությանը: Նախորդ նիստում չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում և ասաց՝ «կարճ կապեք»... եթե չես հասկանում, ինչո՞ւ կարճ կապեմ, գնա ձեր տուն, կատուներին դատապարտի: Քո կատուների գործը լսի, ոչ թե մարդկանց ... դե, նա շատ կատուներ է պահում»:*

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... *Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:*

<u>Այս տեսակետից ՀԼՄ-ների հրապարակումներում նշված փաստերը հաստատվելու, և փաստաբան Ռուբեն Սահակյանի կողմից կատարված արտահայտությունները վիրավորական համարելու դեպքում փաստաբան Ռուբեն Սահակյանի վարքագիծն առերևույթ կարող է հակասել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետով նախատեսված կանոններին:</u>

* * *

<u>Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է</u>՝ *փաստաբան Ռուբեն Սահակյանի կողմից դատավոր Աննա Դանիբեկյանի հասցեին առերևույթ զսպվածությունը և բարեկրթությունը սահմանազանցող արտահայտություններով փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը խաթարելու վարքագիծը ստուգելու նպատակով:*

Միաժամանակ Պալատը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի, 39.3 հոդվածի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 2-րդ գլխի պահանջներով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն վերապահելու մասին» Պալատի նախագահի 21.11.2019թ. թիվ 479-Ա որոշմամբ,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Ռուբեն Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 13) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի*** *2.2.2* ***ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ՝ ԿԳ-****19239):*

2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝***

– ***կարգապահական գործը սահմանված կարգով հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.***

– ***սույն որոշման օրինակն ուղարկել փաստաբան Ռուբեն Սահակյանին՝ պարզաբանելով «Փաստաբանության մասին» օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները.***

– ***սույն որոշումը հրապարակել Պալատի կայքում:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանի պալատի
նախագահի առաջին տեղակալ՝ Էմիլ Ամիրխանյան

21 **նոյեմբերի 2019թ.**
թիվ 480-**Ա/ԿԳ**-19239
ք. **Երևան**